# ՊԱՏՐԱՍՏ ՊԱՀԵՔ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Արտակարգ իրավիճակների դեպքում, դուք կարող եք ընդամենը տարհանման մասին ակնթարթային ծանուցում ստանալ: Ահա առաջարկվող մի քանի կետեր, որոնք պետք է հաշվի առնել:

## ՁԵՐ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ

- ☐ Շշալցված ջրի եռօրյա պաշար (օրական մեկ գալոն մեկ անձի համար)
- ☐ Առաջին բուժօգնության հավաքածու, առաջին անհրաժեշտության դեղամիջոցներ և ակնոցներ
- ☐ Փաթեթավորված, չորացրած և պահածոյացված սննդի եռօրյա պաշար
- ☐ Պահածոյի ձեռքի բացիչ
- ☐ Ընտանի կենդանիների սնունդ և ընտանի կենդանիների փոխադրամիջոց
- ☐ Պահեստային մարտկոցներով դյուրակիր ռադիո և լապտերներ՝ անջրանցիկ պայուսակներում
- ☐ Մեքենայի բանալիների, կանխիկի և վարկային քարտերի լրացուցիչ հավաքածու
- ☐ Հատուկ պարագաներ նորածինների համար
- ☐ Բջջային հեռախոս լիցքավորիչներով և պահեստային մարտկոցով
- ☐ Սուլիչ՝ օգնության ազդանշան խնդրելու համար
- ☐ Հագուստով և հիգիենայի պարագաներով փոքր ճամպրուկ
- ☐ Դիմակ
- ☐ Ձեռքի ախտահանիչ միջոց
- ☐ Կրակմարիչ
- ☐ Կարևոր փաստաթղթեր

## ԻՐԵՐ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

- ☐ Բժշկական սարքավորումներ (ներառյալ մարտկոցներ և լիցքավորիչներ)
- ☐ Դեղատոմսեր
- ☐ Բժշկական, դեղատների և բժշկական սարքավորումների մատակարարների ցանկը՝ ներառյալ հեռախոսահամարները
- ☐ Դեղատոմսերի, բժիշկների ցուցումների և բժշկական սարքերի սերիական համարների պատճենները
- ☐ Լրացուցիչ ակնոցներ և լսողական սարքեր (ներառյալ լրացուցիչ մարտկոցներ)
- ☐ Բժշկական նախազգուշացման պիտակներ կամ թևնոցներ կամ ձեր հաշմանդամության և/կամ կարիքների գրավոր նկարագրություն, եթե չեք կարողանում նկարագրել իրադրությունն արտակարգ իրավիճակում
- ☐ Օժանդակ տեխնոլոգիաներ և/կամ հաղորդակցման գործիքներ
- ☐ Հասանելի բնակարան
- ☐ Շուն-ուղեկցորդ

Հետևեք մեզ՝

Անվտանգությունը պլանավորեք **sdge.com/emergency** էջի խորհուրդների, տեսանյութերի և ստուգաթերթերի օգնությամբ:

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ

## Արտակարգ իրավիճակներում ամենակարևոր բանը, որ կարող եք անել, պատրաստ լինելն է:

### SDG&E®

Լրացուցիչ տեղեկությունների համար, զանգահարեք **1-800-411-7343** հեռախոսահամարով կամ այցելեք **sdge.com/safety** էջը:

### Համայնքային ռեսուրս կենտրոններ

Հանրային անվտանգության նկատառումներով Էլեկտրաէներգիայի երկարաձգված անջատումների ժամանակ մենք կբացենք ռեսուրս կենտրոններ: Գտեք ռեսուրս կենտրոնն **sdge.com/resource-centers** էջում:

### Պատրաստ է Սան Դիեգո

վարչաշրջանի Արտակարգ իրավիճակների ծառայությունների գրասենյակը: Արտակարգ իրավիճակների դեպքում ծանուցումների համար, գրանցվեք **readysandiego.org** էջում :

### Ներբեռնեք **SD Emergency** հավելվածը

**https://www.readysandiego.org/SDEmergencyApp/**

### Ամերիկյան Կարմիր Խաչ

Սան Դիեգո/Իմպերիալ՝ վարչաշրջանների բաժանմունք:

Օգնություն՝ արտակարգ իրավիճակներից առաջ, դրանց ընթացքում և հետո:

Սան Դիեգո/Իմպերիալ վարչաշրջաններ՝ ***redcross.org/sandiego***

Օրինջ վարչաշրջան՝ ***redcross.org/oc***

### 211 Թեժ գիծ

SDG&E-ը և 211-ը համագործակցել են՝ համապատասխան տեղեկատվություն և ծառայություններ տրամադրելու համար՝ PSPS-ի և արտակարգ իրավիճակների ժամանակ պատրաստվածությունը և ինքնակայունությունը բարձրացնելու նպատակով: Ծառայությունները կարող են ներառել աջակցող տրանսպորտային փոխադրումները, ռեզերվային էներգասնուցումը, նախապատրաստության պարագաները, սննդային ապահովումը, ժամանակավոր կացարանները և բարեկեցության ստուգումները: Ուղիղ կապի օպերատորը կարող է օգնել ձեզ գտնել այն, ինչը ձեզ անհրաժեշտ է՝ ձեր գտնվելու վայրում, ընդամենը հավաքեք 211:

### News Radio AM 1600 KOGO

Միացե՛ք KOGO-ին՝ արտակարգ իրավիճակների ժամանակ վերջին թարմացումների համար:

SDGE™ | & ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

**ՀԱՎԱՔԵՔ 911** ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ, ՀՐՇԵՋ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

©2021 San Diego Gas & Electric Company. Ապրանքային նշաններն իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են: Բոլոր իրավունքները պաշտպանված են: S2110025 1021 34.7M